ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3701 ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Հեռ.(0287) 2.12.17, (060)747077
Ֆաքս 2.12.02, (060)747077

N 789
11 ՀՈՒԼԻՍԻ 2022թ.

«Գ.ՊԱՊՈՅԱՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԻՆԵ ՊԱՊՈՅԱՆԻՆ

Հարգելի Ա.Պապոյան.

Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու)և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 28.04.2022թ-ին կնքվել է ՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2ծածկագրով Ջերմուկի համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր(այսուհետ՝ Պայմանագիր):Հիշյալ պայմանագրի շրջանակներում «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն ստանձնել է Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոց 4-րդ շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների, Ջերմուկ համայնքում կանգառների տաղավարների հիմնանորոգման, նորերի տեղադրման աշխատանքների, Ջերմուկ համայնքի աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգման աշխատանքների, Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգման աշխատանքների, Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքների, Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի գերեզմանատուն տանող աստճանների կառուցման աշխատանքների և Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ 7 շենքին կից աստիճանների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների(թվով 7 չափաբաժին) մատուցման պարտավորությունները, որի ժամկետը սահմանված էր մինչև 28.05.2022թ.-ներառյալ:Հաշվի առնելով «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի՝ 23.05.2022թ.-ի 04/2022/ԳՆ/ՋՀ/ԱԴ գրությունը և N ՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 համաձայնագրով ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է մինչև 27.06.2022 թ.-ը ներառյալ:Ջերմուկի համայնքապետարանի կոմից՝ 28.06.2022թ.-ին «Գ.Պապոյան» ՍՊԸ-ին ուղարկված N 731 ելից գրությամբ տրամադրվել է ևս տասնօրյա ժամկետ(որպես ողջամիտ ժամկետ) պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու և նախագծանախահաշվային փաստաթղթերը Ջերմուկի համայնքապետարան ներկայացնելու համար:

Վերոնշյալ ժամանակահատվածներում «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն չի կատարել N ՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները և Ջերմուկի համայնքապետարան փաստացի չի ներկայացրել ընկերության կողմից հաստատված համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Համաձայն Ջերմուկի համայնքապետարանի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի միջև՝ 28.04.2022թ-ին կնքված ՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալները՝ Ջերմուկի համայնքապետարանը 11.07.2022թ.-ից միակողմանի լուծում է «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի հետ՝ 28.04.2022թ-ին կնքված ՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2ծածկագրով պայմանագիրը,պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության

04.05.2017թ.-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետիևՆՋՀ-ԳՀԾՁԲ-22/2.2 ծածկագրով պայմանագրի 7.11 կետի դրույթները:

«Գ.Պապոյան» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով ներկայացվելու են համապատասխան կառույցներին Ջերմուկի համայնքապետարանին փոխանցելու նպատակով, ինչպես նաև կիրառվելու են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության պահանջները

Ծանոթություն:Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելո ւիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելո օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

Կատ.՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Սմբատ Պապոյան